

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԵԱԿՈՒՅԹԻ ՏԵՍԱԿԱՆ-ՄԵԹՈԴԱՔԱՆԱԿԱՆ ԳԻՄՅԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ե.Հ. Օրդուխամյան
քաղաքական գիտությունների թեկնածու

Ժամանակակից աշխարհում տեղի ունեցող տարածույթ փոխակերպումներն իրենց ազդեցությունն են բողոքութակական կյանքի տարրերը բնազավազների վրա: Այդ փոխակերպումները, անխուսափելիորեն, ներգործուն են նաև հասարակության քաղաքական իրականության վրա՝ առաջացնելով քաղաքական երևույթների ուսումնասիրության նոր պահանջ, որի շրջանակներում իր կարևոր տեղն ու նշանակությունն ունի քաղաքական մշակույթը: Դիտարկելով քաղաքական մշակույթը արդյունք՝ վերջինիս ուսումնասիրության վերաբերյալ տեսական-մեթոդաբանական և արժեքաբանական մոտեցումների վերլուծությունը մեզ համար դասնուն է արդիական և անհրաժեշտ քաղաքագիտական խնդիր: Քաղաքական մշակույթի ուսումնասիրությունը որպես քաղաքական համակարգի տարր՝ հնարավորություն է տալիս բացահայտել նրա եւրոպումը և բովանդակությունը, ինչպես նաև բնութագրել քաղաքական մշակույթը որպես քաղաքական գործընթացների զարգացման կայուն գործոն:

Այս վերլուծությունը հիմնված է հայրենական և արտասահմանյան հետազոտողների աշխատությունների ուսումնասիրության և դրանց իմաստագործման վրա: Մեթոդաբանական տեսանկյունից այն ոչ միայն թույլ է տալիս բացահայտել քաղաքական մշակույթի զարգացումը և կառուցվածքը, որոշել նրա տեղը և դերը հասարակության մեջ, ինչպես նաև՝ քաղաքական համակարգում, այլև թույլ է տալիս վեր հանել վերջինիս հետազոտության տեսական-մեթոդաբանական և քաղաքագիտական առումները:

Վերջին քսան տարիները Հայաստանի Հանրապետությունում բնութագրվում են որպես բարեփոխումների և արդիականցման փուլ: Սակայն հարկ է նկատել, որ հայրենական մասնագիտական զրականության մեջ այդ փուլը, առավելապես, բնութագրվում է որպես փոխակերպումների փուլ, որն ընթանում է համակարգային ճգնաժամի պայմաններում: Այդ հիմնախնդրին հասարակական համակարգի սոցիալական և քաղաքական փոխակերպումներին նվիրված իրենց հիմնարար աշ-

խատություններում անդրադարձել են հայ հետազոտողներ Գ. Պողոսյանը, Տ. Թորոսյանը, Ա. Ենգոյանը¹ և ուրիշներ, ովքեր նշում են, որ Հայաստանում արդիականացման գործընթացը մեծ մասամբ ուղղեկցվել է հասարակական-քաղաքական ուլորտում որոշակի ճգնաժամային դրսերումներով, ինչն առաջացրել է տեղի ունեցող գործընթացների հանդեպ հասարակական անբավարարվածության զգացում, որը, սակայն, չի նվազեցրել հասարակության՝ բարեկեցիկ և կայուն ապագա ունենալու ծգությը:

Այսպես՝ սոցիոլոգ Գ. Պողոսյանը Հայաստանում արդիականացման գործընթացը բնորոշելիս ուսումնասիրում է արդի հայ հասարակության տրանսֆորմացիայի հիմնական միտումները՝ լայնածավալ սոցիոլոգիական նյութի հիման վրա վերլուծության ենթարկելով վերջին տասնամյակի ընթացքում սոցիալական կառուցվածքում, սոցիալ-քաղաքական ինստիտուտներում և հասարակական գիտակցության մեջ տեղի ունեցած արմատական փոփոխությունները, որոնք քաղաքական մշակույթի տարրեր են: Իր աշխատության մեջ հեղինակը դիտարկում է նաև հայ հասարակության արդիականացման արդյունավետության հարցերը և սոցիալական գործընթացների զարգացման հեռանկարները մոտ ապագայում: Հեղինակն իրավացիորեն նշում է, որ մեր իրականության մեջ արդիականացման գործընթացների սոցիալ-փիլիսոփայական վերլուծության կարևոր տեսական եզրահանգումը «սոցիալական հետընթացի» հայեցակարգն է, որը բացատրում է հետխորհրդային հասարակություններում տեղի ունեցող շատ բարդ երևույթներ: Նախ և առաջ խոսքը հետխորհրդային տարածքում լայնութեն տարածված այնպիսի երևույթների մասին է, ինչպիսիք են՝ սոցիալական թեոռացումն ու սոցիալական կառուցվածքի որակական վատրարացումը, աճող արտագաղթը և սոցիալ-մարզինալ շերտերի ավելացումը:² Այսպիսով՝ հեղինակը պնդում է, որ հայ հասարակության արդիականացումը ոչ թե անցումային փուլի շրջանակներում կառավարվող բարեփոխման, այլ, ավելի շուտ, հասարակության համակար-

¹Պողոսյան Գ., Հայ հասարակությունը XXI դարասկզբին, «Լուսարաց հրատ.», Երևան, 2007, 373 էջ, 2. Թորոսյան Տ., Հասարակական համակարգի հետխորհրդային տրանսֆորմացիա, ՀՀ ԳԱԱ «Գիտություն հրատ.», Երևան, 2006, 424 էջ, 3. Եղօքոյ Ա. Идеологические основы социально-политических трансформаций в постсоветской Армении, «Изд. РАУ», Ереван, 2011, 358 ս.

²Պողոսյան Գ., Հայ հասարակությունը XXI դարասկզբին, «Լուսարաց հրատ.», Երևան, 2007, էջ 354:

գային փոխակերպման գործընթաց է: Ի տարբերություն կարգավորվող անցումային փուլի՝ տրանսֆորմացիան սոցիումի մի այնպիսի փոփոխություն է, որը սկզբնապես ներկայանում է առանձին հիմնարար սկզբունքների փոփոխությամբ, իսկ հետագա ընթացքը դուրս է գալիս վերահսկողությունից և հիմնականում կրում է տարերային-անկառավարելի բնույթը:¹

Հասարակական համակարգի տրանսֆորմացիայի ընթացքը, միտումները և դրանց քաղաքագիտական հայեցակարգերը խորապես վերլուծվել են նաև քաղաքագետ S. Թորոսյանի կողմից, ով առաջարկում է այդ երևույթի ուսումնասիրության հայեցակարգային նոր մոտեցում՝ դիտարկելով հետխորհրդային տրանսֆորմացիան որպես բազմագործոն, բազմավեկտոր համակարգային գործընթաց իր երեք հիմնական չափումներով՝ ներքին (քաղաքական), երբանական (հասարակական գիտակցության), արտաքին (նիշազգային հարաբերությունների), որի առանցքը, ըստ հեղինակի, տրանսֆորմացիայի նպատակի և դրա իրազործնան ուղղու ընտրությունն է քաղաքակրթական համատեղելիության սկզբունքի հիման վրա: Քաղաքական մշակույթի տեսանկյունից S. Թորոսյանն առաջարկում և հիմնավորում է քաղաքական ընդդիմության դերակատարության ուսումնասիրության առաջնայնությունը՝ որպես կայացած ժողովրդավարության նախապայման հանդիսացող լիարժեք բազմավուսակցական համակարգի ձևավորվածության ցուցանիշը:²

Ուշագրավ են նաև քաղաքագետ Ա. Ենգոյանի գիտական մոտեցումները սոցիալ-քաղաքական փոխակերպումների գաղափարախոսական հիմքերի վերաբերյալ, որոնցում հեղինակը վերլուծում է հայ հասարակության արդիականացնան գործընթացում գաղափարական հենքի, ուզումավարության և մարտավարության կայացման հիմնախնդիրները: Գնահատելի է հեղինակի այն պնդումը, որ արդի սոցիալ-քաղաքական փոխակերպումների գաղափարախոսական հիմքերը կոչված են հարմարեցնելու մարդկանց կողմից մշակված ժողովրդավարական սկզբունքներն ազգային քաղաքական մշակույթի առանձնա-

¹Տես նոյն տեղում, էջ 355:

²Թորոսյան S., Հասարակական համակարգի հետխորհրդային տրանսֆորմացիա, ՀՀ ԳԱԱ «Գիտություն իրատ.», Երևան, 2006, էջ 298:

հատկություններին:¹ Այստեղից կարելի է եզրակացնել, որ ժողովրդավարացման արհեստական ներդրումն առանց հաշվի առնելու ազգային քաղաքական ավանդույթները և երնիկ առանձնահատկությունները. չի կարող ապահովել հասարակության և քաղաքական համակարգի արդյուանվետ և անցնցում արդիականացումը: Առանձնապես կարևոր է այն, որ հեղինակը, ուսումնասիրելով Դայաստանում սոցիալ-քաղաքական փոխակերպումների գաղափարախոսական հիմքերը, առանձնացնում է հայ հասարակության անցումային գործընթացի երեք փուլ, որոնք պայմանավորված են այս կամ այն գաղափարական համակարգի միջյանց նկատմամբ ունեցած առաջնայնությամբ: Առաջին փուլը ներառում է Դայաստանի անկախության հոչակումից մինչև 20-րդ դարի վերջը ընկած ժամանակաշրջանը և բնութագրվում է ազատական արժեքների տիրապետող դերակատարությամբ: Երկրորդ փուլը տևում է մինչև 21-րդ դարի առաջին տասնամյակը, երբ բացվում է ազգային արժեքների «Երկրորդ շնչառությունը», որի հիման վրա ակտիվանում է պահպանողական աշխարհայացքը: Իսկ երրորդ փուլը, որը բնութագրում է այսօրվա հայ հասարակությունը, ընթանում է ազգային հիմքի վրա ազատական և պահպանողական գաղափարական համակարգերի համաձայնեցմամբ:² Դարկ է նկատել, որ քաղաքական գաղափարախոսությունները ևս քաղաքական մշակույթում ունեն իրենց տեղը և դերը, որոնց համակարգային ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ավելի հստակ պատկերացնել քաղաքական մշակույթը իր գաղափարական առանձնահատկությունների տեսանկյունից:

Այս պարագայում դիպուկ կարելի է համարել ռուս հետազոտող Ա. Զորյավոնիսլովի «հասվեհաս արդիականացում (договорно-штатная модернизация)»³ բնորոշումը, որը հեղինակը տալիս է հետխորհրդային իրականությանը: Նկատենք, որ հետխորհրդային գործեր բոլոր Երկրներում արդիականացման գործընթացն ուղեկցվել է որոշակի հասարակական-քաղաքական ճգնաժամերով, որոնք ներիատուկ են եղել ոչ միայն հասարակական հարաբերություններին, այլև հասարակա-

¹ Енгоян А. Идеологические основы социально-политических трансформаций в постсоветской Армении, «Изд. РАУ», Ереван, 2011, с. 48.

²Տես նույն տեղում, լո 330-331:

³ Здравомыслов А. Социология российского кризиса: Статьи и доклады 90-х годов. - М., 1999, 324 с.

կան կյանքի տարբեր կարևոր ոլորտներին, ինչպիսիք են՝ հոգևոր ճգնաժամը, արժեքների ճգնաժամը, որոնք ուղեկցվել են իշխանության հանդեպ բնակչության Վստահության ճգնաժամով։ Այս պարագայում պետք է ընդգծել արժեքային ճգնաժամի նշանակությունը, քանի որ դրա առկայությունը կանխորոշում և պայմանավորում է հասարակական-քաղաքական փոփոխությունների եռթյունը, որոնք տեղի են ունենում հետխորհրդային հայ հասարակության քաղաքական մշակույթում։ Ըստ եռթյան՝ քաղաքագիտական հետազոտություններում արժեքաբանական չափումները թույլ են տալիս լավագույն կերպով որոշել քաղաքացիական դիրքորոշումների, իշխանության փոխակերպման դինամիկան և, վերջապես, թույլ են տալիս պարզել հասարակության կողմից սոցիալ-քաղաքական բարեփոխումների յուրացման աստիճանը։

Քաղաքականության մեջ արժեքների ընդունումը կամ մերժումը մեծ մասսամբ կանխորոշում են մարդկանց քաղաքացիական դիրքորոշումների ձևավորումը։ Իշխանությունը այս պարագայում է որպես կարևորագույն քաղաքական արժեք, որի նկատմամբ սոցիալական խմբերի կամ առանձին քաղաքացու վերաբերմունքը կարող է ընդունվել որպես քաղաքական գործընթացները բնութագրող պայմանական գործոն։ Իշխանության հասկացությունն այս դեպքում սերտորեն կապվում է պետության հետ, որը՝ որպես սոցիալ-քաղաքական ինստիտուտ, պետք է ապահովի հասարակական կյանքի կազմակերպումը, քաղաքացիների ընդհանուր ազգային շահերի իրացումը և իրավունքների պաշտպանությունը։ Ինչպես ցույց են տալիս վերջին տասնինմայ տարիներին Հայկական սոցիոլոգիական ասոցիացիայի (ՀՍԱ)¹ կողմից իրականացված հետազոտությունները՝ հայ հասարակության մեծամասնությունը հավանություն է տալիս այնպիսի արժեքների, ինչպիսիք են՝ ժողովրդակարությունը, քաղաքական և տնտեսական պլյուրալիզմը, ազատական գաղափարախոսությունը և այլն։

Այսօր նկատելի է, որ մեր իրականության մեջ քաղաքական և տնտեսական արդիականացումը հիմնականում ուղեկցվում է ակնհայտ կամ ոչ ակնհայտ կոնֆլիկտային դրսնորումներով։ Ուստի կոնֆլիկտային տարրեր պարունակող այս գործընթացը նախ և առաջ պահանջում է սույն խնդրի դիմումական հարցում արժեքաբանական նո-

¹ Հայկական սոցիոլոգիական ասոցիացիա, www.asa.sci.am

տեցում: Հասարակության և պետության մեջ տեղի ունեցող փոխակերպումները ժամանակային առումով համընկնում են անհատական և խճաբային շահերի արտահայտման հետ՝ հանգեցնելով դրանց կրողների միջև բախումների առաջացմանը: Իսկ հասարակության մեջ բարձր կոնֆլիկտայնության առկայությունը պարունակում է բազմապիսի վտանգներ, որոնք նպաստավոր պայմաններում կարող են դրսնորվել և ունենալ ծանր սոցիալ-քաղաքական հետևանքներ:

Գոյություն ունի մեկ այլ հանգամանք ևս, որը կարևորում է քաղաքական մշակույթի տեսական և քաղաքագիտական առումների ուսումնասիրությունը: Խոսքը ամերիկացի հետազոտող Կ. Ֆեննեների այն պնդման մասին է, ըստ որի՝ քաղաքական մշակույթի տեսական-արժեքաբանական ուսումնասիրությունը բույլ է տալիս «սահմանել գործող հանգարդի վերաբերյալ քաղաքացիների հիմնական արժեքները, գիտելիքները, հուզական կապերը և լոյալությունը, որոշել կայունություն երաշխավորող քաղաքացիական մշակույթի արժեքների պակասը, ստեղծել սահմանադրական և հոգեբանական այնպիսի պայմաններ, որոնք քաղաքական սոցիալականացման ընթացքում կիանցեն անքողական քաղաքական կամ քաղաքացիական մշակույթի ձևավորման»:¹ Ուսումնասիրվող խնդրի արժեքաբանական կողմի քացահայտումը կարող է բույլ տալ պարզաբնական քաղաքական գործընթացների վրա քաղաքական մշակույթի ազդեցության եռությունը: Զաղաքական գործընթացների հետազոտությունը քաղաքական մշակույթի դիտանկյունից բույլ է տալիս խորանության լինել հասարակության և պետության ներսում տեղի ունեցող փոխակերպումների մեջ, քանի որ քաղաքական մշակույթն իր անքողականությամբ ընդգրկում է քաղաքական կյանքի բոլոր բնագավառները:

Դարկ է նկատել, որ այսօր մասնագիտական գրականության մեջ առանձնացնում են քաղաքական մշակույթի վերաբերյալ նոտ իինդ տասնյակ սահմանումներ, որոնք տարրեր հեղինակների մոտ, մեծ մասսամբ, հիմնվում են անքող հասարակության, նրա դասերի, սոցիալական խմբերի և անհատի՝ որպես առանձին տարրերի տարրերական վրա: Վերջին ժամանակաշրջանում բազմակուսակցական համակարգի, քաղաքացիական հասարակության և ժողովրդավարական այլ

¹ Феннер К. Политическая культура // Политология: Краткий тематический словарь. Вып. I-М., 1992, с. 70.

ինստիտուտների ծևավորման գործընթացում Հայաստանում առավելապես կարելի է նկատել քաղաքական կուսակցությունների և հասարակական-քաղաքական շարժումների՝ որպես քաղաքական մշակույթի տարրերի ակտիվ հետազոտություն: Այս և այլ քաղաքական ինստիտուտներ մեր իրականության մեջ՝ որպես առանձին տարրեր, ուսումնասիրվում են նաև հայ քաղաքագետների կողմից (Գ. Զեռյան, Մ. Մարգարյան, Ա. Մարգարով, Յ. Սուլդիասյան, է. Օրդուխանյան¹ և ուրիշներ): Այս հետազոտողներն իրենց աշխատություններում վերլուծության են ենթարկել քաղաքական մշակույթի այնպիսի առանձին տարրեր, ինչպիսիք են՝ քաղաքական կուսակցությունները և դրանց տիպաբանությունը, քաղաքական ընտրանին և ժողովրդավարացման անցման հիմնախնդիրները, կիսանախազահական կառավարման ձեզ հետխորհրդային տարածաշրջանում, տեղեկատվական հասարակության սոցիալ-քաղաքական հիմնախնդիրները, իշխանության և ընդդինության քաղաքական խոսույթի վերլուծությունը: Սակայն քաղաքական մշակույթը որպես ամբողջական քաղաքագիտական գիտակարգ կիրառական առումով ուսումնասիրվել է է. Օրդուխանյանի և Յ. Սուլդիասյանի համատեղ հետազոտության² շրջանակներում: Այդ հետազոտությունը հեղինակները դիտարկել են քաղաքական մշակույթը քաղաքական խոսույթի և տեղեկատվական հասարակության՝ քաղաքագիտական նոր գիտակարգերի համատեքստություն: Այդ հետազոտության շրջանակներում ուսումնասիրության են ենթարկվել քաղաքական մշակույթի տարրեր հանդիսացող քաղաքական գիտակցությունը, քաղաքական վարքագիծը և մասնակցությունը, քաղաքական ուժերի գաղափարական առանձնահատկությունները, էեկտրոնային ժողովրդավարության առավելությունները և թերությունները և այլն: Դարձ է նկա-

¹ Զեռյան Գ. Քաղաքական կուսակցությունների տիպաբանությունը, «ԿանԱրյան», Երևան, 2002, 288 էջ. 2. Մարգարյան Մ. Քաղաքական ընտրանին և ժողովրդավարական անցման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, «Պետական ծառայություն», Երևան, 2006, 391 էջ. 3. Մարկար Ա. Պոլուպրեզidentalizm в контексте постсоветской трансформации <http://www.politek.info/content/view/219/30/>, (18.10.2012), 4. Սուլդիասյան Յ. Տեղեկատվական հասարակություն. սոցիալ-քաղաքական հիմնախնդիրներ, «Սարգսրդ» հրատ., Երևան, 2009, 268 էջ. 5. Օրդուխանյան Է. Իշխանություն և ընդդինություն. քաղաքական խոսույթի վերլուծություն, «Լինուշ» հրատ., Երևան, 2010, 228 էջ:

² Օրդուխանյան Է., Սուլդիասյան Յ. Քաղաքական մշակույթի առանձնահատկությունները Հայաստանում, «Լուսաբաց» հրատ., Երևան, 2012, 94 էջ:

տել, որ հետազոտությունում հեղինակներն իրավացիորեն նշում են քաղաքական մշակույթի վրա քաղաքական խոսույթի ազդեցության և Նյայաստանում նոր տեղեկատվական քաղաքական մշակույթի ծևավորման անհրաժեշտության մասին:¹

Ինչ վերաբերում է հետխորհրդային շրջանում քաղաքական մշակույթի վերաբերյալ կատարված ուսումնասիրություններին, ապա այս պարագայում կարևոր է առանձնացնել ոուս հետազոտող Ե. Մորոզովայի «Տարածաշրջանային քաղաքական մշակույթ» հետազոտությունը, որտեղ հեղինակը, ուսումնասիրելով արևատյան քաղաքագետներ Գ. Ալմոնդի, Ա. Բրաունի, Ս. Վերբայի, Ռ. Թակերի, Ս. Ուայրի, Ռ. Ֆեյգենի և այլոց աշխատանքները, առանձնացնում է քաղաքական մշակույթի հետազոտության երեք հիմնական մոտեցում:

Վարդարանական մոտեցում, որը հիմնվում է ճշգրիտ գիտությունների մերոդաբանության վրա: Այս պարագայում քաղաքագիտական վերլուծության առարկա է դասնում քաղաքական վարքագծի ենակիրիկ չափումը, որը ներառում է սոցիոլոգիական ընտրանքը, հարցազրույցը, մաթեմատիկական և վիճակագրական մեթոդները քաղաքական վարքագծի գիտական վերլուծության համար:

Սուլրեկտիվիստական մոտեցում, որը լրացուցիչ հիմքեր է ստեղծում քաղաքական մշակույթի ուսումնասիրության համար (հուշեր, գեղարվեստական գրականություն, պատմական և սոցիալ-պատմական հետազոտություններ): Այս պարագայում անցյալի քաղաքական մշակույթը դիտարկվում է որպես նոր քաղաքական մշակույթի ծևավորման հիմնական գործոն:

Ինտերպրետացիոն մոտեցում, որը կոչված է վերառուղորուել քաղաքական մշակույթի մասին գիտությունը քաղաքական համակարգի՝ որպես քաղաքական վարքի արտացոլման վերլուծությունից դեպի իրական և կատարյալ մշակութային նորուշերի վերլուծություն: Այս դեպքում քաղաքական արժեքների փոխանցումը սինվոլների միջոցով սահմանվում է որպես քաղաքական կապ, իսկ այդ համակարգի ուսումնասիրությունը վերլուծաբանին հնարավորություն է տալիս հետազոտել քաղաքական մշակույթը ժամանակակից մշակութարանության համատեքստում:²

¹ Տես նույն տեղում, էջ 93-94:

² Морозова Е. Региональная политическая культура / Науч. ред. А.П. Зиновьев. - Краснодар, 1998, с. 40-41.

Նարկ է նկատել, որ քաղաքական մշակույթը խորապես ուսումնասիրված է արևմտյան քաղաքագիտությունում, որի տեսական-մեթոդաբանական վերլուծությանը կանդրադառնանց ստորև:

Այսպես՝ արտասահմանյան քաղաքագիտության մեջ քաղաքական մշակույթի՝ որպես առանձին քաղաքական երևույթի ուսումնասիրության առաջամարտիկ ընդունված է համարել Գ. Ալմոնդին, ով փորձեց ինաստավորել քաղաքական մշակույթը որպես հայեցակարգ: Գ. Ալմոնդը և Ս. Վերբան բնորոշեցին քաղաքական մշակույթը որպես հարաբերականորեն սահմանված սոցիալական օրյեկտների և գործնթացների ամբողջություն, որն ընկած է քաղաքական գործողությունների հիմքում: Անհատական կողմնորոշումներն ըստ հեղինակների պարունակում են նի քանի տարրեր՝ ա) ճանաչողական կողմնորոշում, այսինքն՝ քաղաքական օրյեկտների և զաղափարների մասին ճշնարիտ կամ կեղծ պատկերացում, բ) արդյունավետ կողմնորոշում, այսինքն՝ քաղաքական օրյեկտների նկատմամբ կապվածության, ներգրավվածության, հակագդեցության զգացում, գ) գնահատողական կողմնորոշում, այսինքն՝ դատողություններ և կարժիքներ քաղաքական օրյեկտների մասին, որոնք, որպես կանոն, պահանջում են քաղաքական օրյեկտների և իրադարձությունների նկատմամբ գնահատողական չափանիշների գործածություն:¹

Ալմոնդի աշխատանքների ուսումնասիրությունը շատ կարևոր է քաղաքական մշակույթի քաղաքագիտական հետազոտության մեթոդաբանության վերհաննան համար, քանի որ նրա՝ քաղաքական համակարգերի վերլուծության համեմատական մեթոդը նախ և առաջ հենարավորություն է տալիս հետևել քաղաքագիտական հետազոտության մեթոդաբանության ծևավորման փուլերին և մեխանիզմներին, այնուհետև՝ բացահայտել քաղաքական մշակույթի տեսակների համեմատական վերլուծության առանձնահատկությունները: Ալմոնդն իր աշխատություններում հենվում էր Տ. Պարսոնսի կառուցվածքային ֆունկցիոնալիզմի մեթոդաբանության վրա և դիտարկում էր հասարակության քաղաքական ոլորտը որպես համակարգ, որը գտնվում է այլ սոցիալական համակարգերի հետ հավասարակշության և փոխգոր-

¹Ալմոնդ Գ., Վերբա Ս. Гражданские культуры. Политические установки и демократии пяти наций // Антология мировой политической мысли. В 5 т. / Рук. проекта Г.Ю. Семигин. Т. II. Зарубежная политическая мысль XX в. - М., 1997, с. 594-595.

ծակցության պայմաններում: Նրա քաղաքագիտական հետազոտության մեթոդն առաջնություն է տալիս քաղաքական վարքի մշակութային-հոգեբանական սահմանամարտ: Այս պարագայում հարկ է նկատել, որ ամերիկյան քաղաքագետներ Գ. Ալմոնդը, Ինչպես նաև Ս. Վերաբան, Ս. Բիբը, Ռ. Սաքուիթիսը, Զ. Սմիթը և Ա. Ուլամը¹ քաղաքական մշակույթի վերլուծության վարքաբանական մոտեցման կողմնակիցներ են: Սակայն քաղաքական մշակույթի հետազոտությունը միայն հոգեբանական գործոններով սահմանափակելը թույլ չի տալիս ընկալել այդ երևույթը իր հավաքական անբողջության մեջ: Ուստի կարելի է պնդել, որ Ալմոնդի և Վերբայի մշակումները քաղաքական մշակույթի տարրերի տարրերակման տեսանկյունից ունեն խոցելի կողմեր: Օրինակ՝ քաղաքական մշակույթի վերլուծության ժամանակ հասարակության կողմից ընդունված և յուրացված քաղաքական վարքի նոուշների և մոդելների անտեսումը նեղացնում է «քաղաքական մշակույթի» հասկացությունը: Իսկ ամերիկացի քաղաքագետները հաճախ հիեալականցնում են անգլո-սաքսոնյան քաղաքական մշակույթը՝ այն ներկայացնելով որպես համընդիանուր քաղաքակրթական չափանիշ: Սակայն միանշանակ կարելի է պնդել, որ յուրաքանչյուր ազգ, ժողովուրդ կամ քաղաքակրթություն ունի պատմականորեն և ավանդաբար ձևավորված իր մշակույթը, որի առանձնահատկությունների անտեսումը և օտար տարրերի փոխառումը նոր քաղաքական մշակույթի ձևավորման գործում չեն կարող քաղաքական համակարգի կայունության երաշխիք հանդիսանալ:

Ալմոնդը և Վերբան 1950-ականների ԱՄՆ-ի քաղաքական մշակույթը բնութագրում են որպես համածին, որի հիմքում ազատությունն է: Սակայն ԱՄՆ-ի քաղաքական մշակույթի վերաբերյալ ավելի ուշ՝ 1970-ականներին, Ռ. Էլազարի կողմից իրականացված հետազոտությունը բացահայտում է վերոհիշյալ դատողության միակողմանի բնույթը՝ այն կապելով դեպի ԱՄՆ հզոր միգրացիոն հոսքերի և արոյունքում ձևավորված նոր քաղաքական ենթանշակույթների հետ:²

¹ 1. Альмонд Г., Верба С. Гражданская культура и стабильность демократии // Политические исследования. - 1992. - № 4; 2. Beer S. and Ulam A. Patterns of Government. N.Y., 1958; 3. Macridis R. Interest groups in comparative analysis / Journal of Politics. 1961, February; 4. Smith J.A. The Politics of Culture. N.Y., 2000. <http://www/culturalpolicy.org/about.preface.PDF>.

² Elazar D. American Federalism: A View from the States. N.Y., 1972.

Դնոյիկ քաղաքագետ Պ. Շարանը՝ որպես հոգեբանական մոտեցման կողմնակից, քաղաքական մշակույթում առաջնությունը տալիս է մարդկանց սուբյեկտիվ կողմնորոշմանը՝ ընդգծելով, որ քաղաքական մշակույթը, ինքնին, ներառում է քաղաքական համակարգի հիմնական հատկանիշները և հոգեբանական չափորոշիչները:¹ Որպես քաղաքական համակարգի տարր՝ քաղաքական մշակույթը կանխորոշում է քաղաքական համակարգի գործառնությունը, այսինքն՝ հանդես է գալիս որպես քաղաքական գործնրացների զարգացման և ուղղվածության գործոն:

Լեհ քաղաքագետ Ե. Վյատորը քաղաքական մշակույթը սահմանում է որպես իշխանության և քաղաքացիների փոխհարաբերություններին վերաբերող դիրքորոշումների, արժեքների և վարժագիրի մողելների ամբողջություն: Ըստ Եւլյան, լեհ հետազոտողն իր աշխատություններում տալիս է քաղաքական մշակույթի կառուցվածքի առավել ընդգրկում և ընդհանուր բնորոշումը՝ ներառելով քաղաքական մշակույթուն հետևյալ քաղաքությունը՝² ա) քաղաքականության իմացություն, ծանոթացում փաստերի հետ և հետաքրքրություն դրանց հանդեպ, բ) քաղաքական երևույթների գնահատում, գնահատողական կարծիք այն մասին, թե ինչպիսին պետք է լինի իշխանությունը, գ) քաղաքական դիրքորոշումների հուգական կողմ, օրինակ՝ սեր հայրենիքի հանդեպ, ատելություն թշնամու հանդեպ, դ) տվյալ հասարակությունում ընդունված քաղաքական վարքի տիպերը, որոնք սահմանում են, թե ինչպես պետք է գործել քաղաքական կյանքում:³

Ամերիկացի հետազոտող Ս. Լիպսետը քաղաքական մշակույթը սահմանում է որպես ծեսերի ամբողջություն, որոնք կոչված են պահպանելու տարաբնույթ ժողովրդավարական գործառնությունների օրինականությունը:⁴

Ամերիկայի առարկայական տեսանկյունից հետազոտել քաղաքական մշակույթը և բացահայտել քաղաքական գործնրացների վրա դրա ազդեցությունը առանց արտասահմանյան հեղինակների աշխատությունների ուսումնասիրության, քանի որ դրանցում վերլուծված են

¹Шаран П. Сравнительная политология. Ч.1. Москва, 1992, с. 152.

²Вялкі Е. Социология политических отношений: Пер. с польск./Под ред. Ф.М. Бурлацкого - М., 1979, с. 259-260.

³Липсет С. Политическая социология // Американская социология. Перспективы, проблемы, методы. - М., 1972, с. 203.

ազգային քաղաքական մշակույթի տարրերը քաղաքական օբյեկտների նկատմամբ տվյալ ազգի ներկայացուցիչների առանձնահատուկ դիրքորոշումների տեսանկյունից:¹ Այս հարցին սպառիչ պատասխան են տալիս Ալմոնդը և Վերբան՝ նշելով, որ քաղաքական կողմնորոշումների տիպերի վերաբերյալ իրենց սահմանումները և դասակարգումները հիմնվում են Պարտնսի և Շիլզի մոտեցման վրա: «Կողմնորոշումները վերաբերում են սոցիալական օբյեկտների և հարաբերությունների յուրացված առումներին»:² Ամերիկացի քաղաքագետ Լ. Դիտմերի կարծիքով քաղաքական մշակույթի հետազոտության միջոցով հնարավոր է դառնում բնութագրել ազգային բնավորությունը և հավաքական պատմական փորձի ազդեցությունը ազգային յուրահատկության վրա:³

Արտասահմանյան քաղաքագիտությունում մեծ տեղ է գրավում անձի քաղաքական մշակույթի խնդիրը, որի հետազոտությունը մի շարք դեպքերում իրականացվում է քաղաքական սոցիալականացման էության բացահայտման միջոցով: Օրինակ՝ հնդիկ քաղաքագետ Պ. Շարանը նեկանարանում է անձի քաղաքական մշակույթը որպես քաղաքական համակարգի հանդեպ մարդկանց սուլյեկտիվ արձագանք:⁴ Քաղաքական սոցիալականացումը Շարանը ընկալում է մի կողմից՝ որպես մարդկանց պարտադրվող քաղաքական հայացքներ և արժեքներ, մյուս կողմից՝ որպես իրավիճակ, երբ անձն ինքն է ծևավորում քաղաքական իրականության հանդեպ իր հայացքները,⁵ ինչը ծևավորում է անձերի, քաղաքականության, իրադարձությունների և պահանջների հանդեպ նրա վերաբերմունքը: Քաղաքական սոցիալականացման հիմնական գործառույթը քաղաքացու համար քաղաքական համակարգին հաղորդակից լինելու հնարավորության ապահավումն է: Քա-

¹ Almond G., Verba S. The Civic Culture. Political Attitudes and Democracy in Five Nations. Boston, 1965, p. 13.

² Альмонд Г., Верба С. Гражданская культура. Политические установки и демократии пяти наций // Антология мировой политической мысли. В 5 т. / Рук. проекта Г.Ю. Семигин. Т. II. Зарубежная политическая мысль XX в. - М., 1997, с. 595.

³ Политическая культура в рамках политического менеджмента, <http://www.char.ru/348/298158.htm>

⁴ Шаран П. Сравнительная политология. В двух частях: Пер. с англ. - 4.1. - М., 1992, с. 46.

⁵ Шаран П. Политическая система // Политология вчера и сегодня. Вып. Четвертый. - М., 1992, с. 6.

դաքական սոցիալականացման հարցի դիտարկումը կարևոր է նրա գիտագործական տեսանկյունից, քանի որ ոչ մի քաղաքական կառույց չի կարող լինել կենսունակ, եթե անձն այն չընդունի որպես սոցիալական մեխանիզմի մի մաս և չցուցաբերի նրա հանդեպ հետաքրքրություն: Մերուդաբանական տեսանկյունից մեզ հաճար կարևոր են ավատրիացի և գերմանացի հետազոտողներ՝ Τ. Բերգերի և S. Լուկմանի տեսակետները, քանի որ նրանք դիտարկում են սոցիալականացումը որպես իրականության սոցիալական կառուցավորում՝ տարբերակելով վերջինիս համար երկու հիմնական ձև՝ առաջնային և երկրորդային: Նրանք գտնում են, որ անհատի և հասարակության զարգացման և կայացման գործում որոշչի նշանակություն ունի առաջնային սոցիալականացումը, որի գլխավոր տարրն ընտանիքն է: Իսկ երկրորդային սոցիալականացումը յուրահատուկ դերային նշանակության ձեռքբերումն է, երբ դերերն ուղղակի կամ անուղղակի կերպով կապված են աշխատանքի բաժանման հետ:¹

Արևմտյան քաղաքագիտության մեջ ընդունված է դիտարկել քաղաքանացումը որպես քաղաքական մշակույթի ինդուկցիա, որի արդյունքը քաղաքական համակարգի վերաբերյալ դիրքորոշումների, տեղեկատվական տվյալների, արժեքների և վերաբերմունքի հանրագումարն է: Այս պարագայում շեշտադրվում է այն հանգամանքը, որ քաղաքականացումը ընդգրկում է ոչ միայն քաղաքական գիտնիքների, արժեքների դիտավորյալ ներշնչումը դաստիարակչական գործումների միջնորդությամբ, այլև ներառում է իր մեջ ընդհանուր քաղաքական դաստիարակությունը:² Դարկ է նկատել, որ քաղաքականացումը կարող է ինչպես նպաստել, այնպես էլ խոչընդունել քաղաքական համակարգի հավասարակշուրջան պահպանմանը: Այն հանդես է գալիս որպես քաղաքական համակարգի կայունության վրա ազդելու գործոն, ինչը հնարավոր է քաղաքական մշակույթի վրա նպատակառության ներգործության դեպքում:

Քաղաքական մշակույթի վերաբերյալ արտասահմանյան հեղինակ-Ենիքի հայացքների ուսումնասիրությունը թույլ է տալիս հստակորեն տարբերակել նրանց՝ քաղաքական մշակույթի տիպաբանության մասին դիրքորոշումները: Օրինակ՝ Ալմոնդը և Վերբան առանձնացնում

¹ Бергер П., Лукман Т. Социальное конструирование реальности. - М., 1995, с. 219-225.

² International Encyclopedia of Social Science. T. 13. N.Y., 1968, p. 551.

Են քաղաքական մշակույթի նահապետական, հպատակային և մասնակցային ձևերը՝ առավելապես ընդգծելով քաղաքացիական մշակույթը, որը սահմանվում է որպես «լոյալ մասնակցության մշակույթ»:¹ Այս տիպարանության հիմքում ընկած են քաղաքական ինստիտուտների համեմատ սուբյեկտի քաղաքական կողմնորոշումների փոփոխությունը, նրա քաղաքական ակտիվիտեյան դիմամիկան, որոնք ներկայացված են պատմական զարգացման ընթացքում: Իսկ լեռ քաղաքագետ Վյատրը, հիմք ընդունելով քաղաքական մշակույթների և քաղաքական համակարգերի փոխադարձ կապը, առաջարկում է հետևյալ աստիճանակարգումը՝ ավանդական, բուրժուա-ժողովրավարական և սոցիալիստական ժողովրավարության քաղաքական մշակույթը:² Քաղաքական մշակույթի վերը նշված տիպարանությունը չի կարող լինել համընդհանուր: Պետք է ընդունել, որ Ալմոնդը, Վերբան, Վյատրը և մյուսները իրականացրել են իրենց հետազոտությունները ստույգ պատմական իրավիճակներում և պետություններում, որոնք ունեն իրենց առանձնահատկությունները: Նրանց աշխատություններում ամենաարժեքավորը գիտական հետազոտության մեթոդաբանությունն է, որի միջոցով նրանք իրականացրել են քաղաքական մշակույթի տիպականացման աշխատանքը: Պետք է նկատել, որ այս հեղինակների մշակած մեթոդներն ու վերլուծական մոտեցումներն այսօր լայնորեն և արդյունավետորեն կիրառվում են այլ հետազոտողների կողմից քաղաքական մշակույթի հետազոտության համար: Քաղաքական մշակույթի տիպերի բնորոշման հարցում կարևոր արժեքաբանական քաղաքությունը է, որը գերակշռում է անձի և հասարակության գիտակցության մեջ: Այս պարագայում խոսքը քաղաքական մշակույթի տիպարանության արժեքաբանական սահմանման մասին է:

Վերլուծելով քաղաքական մշակույթի վերաբերյալ հայ և արտասահմանյան հեղինակների մոտեցումները՝ կարելի է պնդել, որ դրանք հիմնականում ընդգրկում են քաղաքական մշակույթի հետազոտության վարքաբանական, հոգեբանական, ինչպես նաև համեմատական մեթոդները:

¹ Almond G., Verba S. The Civic Culture. Political Attitudes and Democracy in Five Nations. Boston, 1965, p. 54.

² Вячар Е. Социология политических отношений: Пер. с польск./Под ред. Ф.М. Бургашского - М., 1979, с. 148.

Այսպիսով՝ ընդհանրացմելով քաղաքական մշակույթի վերաբերյալ ուսումնասիրված հեղինակների նոտեցումները՝ կարելի է քաղաքական մշակույթը սահմանել որպես քաղաքական գաղափարների, գիտելիքների, ավանդույթների և արժեքների, քաղաքական մասնակցության և վարչագծի մողելների, քաղաքական գիտակցության, հաղորդակցության, քաղաքական սոցիալականացման տիպերի, քաղաքական ինստիտուտների փոխհարաբերակցության միջոցների ամրողացություն, որը պայմանավորում է քաղաքական գործընթացմերը և ձևավորում է քաղաքական համակարգ: